



## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

27 մայիսի 2021 թվականի թիվ 84-Ա

ք. Երևան

#### «ՖԱԿՏՈՐ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ-Ի ՆԿԱՏՄԱՍԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՑԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2021 թվականի ապրիլի 23-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 19 վարչական վարույթի նյութերը՝ *սյարգեց*:

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) վերապահված իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս՝ հայտնաբերել է Օրենքի պահանջի խախտում, այն է՝ հեղինակագործված «ՖԱԿՏՈՐ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ-ի (այսուհետ՝ Հեռարձակող) կողմից իր 2020 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկությունը մինչև 2021 թվականի ապրիլի 1-ը Հանձնաժողով չի ներկայացվել:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով՝ 2021 թվականի ապրիլի 23-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2021 թվականի ապրիլի 23-ին ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում 2021 թվականի մայիսի 3-ին Հանձնաժողով մուտքագրված գրավոր բացատրությունում Հեռարձակողը հայտնել է, որ իր 2020 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկությունն Օրենքով սահմանված ժամկետում Հանձնաժողով չներկայացնելը տարրնկալման և տեխնիկական խնդրի արդյունք է, մասնավորապես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Օրենքն ընդունվել է 2020 թվականի հուլիսի 16-ին և ուժի մեջ է մտել 2020 թվականի օգոստոսի 7-ին, իրավական որոշակիության սկզբունքից ելնելով, կարծել են, որ Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը չի կարող տարածվել 2020 թվականի հասույթի վրա և հոդվածում նշված տեղեկությունն անհրաժեշտ է ներկայացնել սկսած 2021 թվականից:

Հեռարձակողը հայտնում է նաև, քանի որ իրենք չեն հանդիսանում Հեռարձակող կամ օպերատոր, ուստի չեն կարծել, որ հանդիսանում են տվյալ տեղեկությունը ներկայացնելու

պարտավորություն կրող սուբյեկտ և միայն Հանձնաժողովի կողմից վարչական վարույթի հարուցման ծանուցումը (ծանուցումը ստացել են 26. 04. 2021թ-ի ն ) ստանալուց հետո են պարզել, որ Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը վերաբերվում է նաև հեղինակագործ սուբյեկտներին, իսկ ավելի ուշ, Հանձնաժողովի ծանուցումը ստանալուց հետո պարզել են նաև, որ Հանձնաժողովի կողմից բոլոր հեղինակագործ ընկերություններին 2021 թվականի մարտի 17-ին հասցեագրված թիվ 05-251 գրությունը իրենց էլեկտրոնային փոստի «սպամ» թղթապանակում է հայտնվել, ուստի, ծանոթ չեն եղել գրությանը:

Այս կապակցությամբ Հեռարձակողը հայտնում է նաև, որ իրենց կազմակերպությունը որևէ դիտավորություն չի ունեցել պահանջվող տեղեկությունը ներկայացնելուց խուսափելու, իսկ պատշաճ ձևով ծանուցված լինելու դեպքում կներկայացնեին պահանջվող տեղեկությունը և իր բացատրություններին կից ներկայացրել է 2020 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկությունը:

Ի լրումն վարչական վարույթի վերաբերյալ Հանձնաժողով ներկայացված բացատրության Հեռարձակողը պարզաբանում է ներկայացրել նաև այն մասին, որ իրենց կազմակերպությունն Օրենքին համապատասխան չի հանդիսանում հեռարձակող, քանի որ կազմակերպության կողմից պատրաստված նյութերը տեղադրվում են միայն համացանցային հարթակներում:

***Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.***

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

«Տեսալսողական մեդիայի մասին» թիվ ՀՕ-395-Ն օրենքն ընդունվել է 2020 թվականի հուլիսի 16-ին, որը պաշտոնական հրապարակումների միասնական կայքում (arlis.am) հրապարակվել է 2020 թվականի օգոստոսի 6-ին և Օրենքն ուժի մեջ է մտել 2020 թվականի օգոստոսի 7-ին: Համաձայն Օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասի՝ սույն օրենքը Հայաստանի Հանրապետությունում տարածվում է տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների, օպերատորների, կարգավորող պետական մարմնի և հանրային տեսալսողական մեդիաձառայություն մատուցողի գործունեության կառավարումն ապահովող և հսկողություն իրականացնող մարմնի վրա: Ուստի, Օրենքով սահմանված նորմերի պահանջները պարտադիր են յուրտում գործունեություն իրականացնող բոլոր տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների համար, բացառությամբ միայն համացանցի միջոցով տեղեկատվություն տարածողների:

Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հեռարձակողները և օպերատորները պարտավոր են յուրաքանչյուր տարի մինչև ապրիլի 1-ը կարգավորող պետական մարմին

ներկայացնել նախորդող տարվա հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկություն:

Հաշվի առնելով, որ Օրենքն ուժի մեջ է մտել 2020 թվականի օգոստոսի 7-ին և տեսալսողական մեդիայի ոլորտում սահմանվել են նոր կարգավորումներ, ուստի, Հանձնաժողովը 2021 թվականի մարտի 17-ի թիվ 05-251 գրությամբ Հեռարձակողին տեղեկացրել է Օրենքի վերոնշյալ դրույթի մասին և առաջարկել է Օրենքով սահմանված ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 2020 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկություն, սակայն մինչև վարչական վարույթի հարուցումը Հեռարձակողի կողմից պահանջվող տեղեկատվությունը Հանձնաժողով չի ներկայացվել:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված և ներկայացրած փաստերը, որի արդյունքում հայտնի է դարձել, որ Հեռարձակողի կողմից իր 2020 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկությունը մինչև 2021 թվականի ապրիլի 1-ը Հանձնաժողով չներկայացնելը Հեռարձակողի կողմից Օրենքի դրույթի տարրնկալման և սխալ մեկնաբանման արդյունք է եղել, ինչպես նաև պահանջվող տեղեկատվությունն Օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ Հանձնաժողովի կողմից Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթի մասին տեղեկացմանը Հեռարձակողը չի ծանոթացել տեխնիկական խնդրի հետևանքով:

Փաստում ենք նաև, որ Հեռարձակողը Հանձնաժողովի կողմից հեղինակագործված իրավաբանական անձ է, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար և պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, սակայն Հեռարձակողի կողմից վարչական վարույթի շրջանակներում ներկայացված բացատրությամբ պարզվել է այն փաստը, որ Հեռարձակողը որպես հեղինակագործված կազմակերպություն իր կողմից պատրաստված նյութերը տեղադրում է միայն համացանցում և Օրենքին համապատասխան հեռարձակող չի հանդիսանում:

Օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն օրենքը չի տարածվում համացանցի, բացառությամբ ցանցային օպերատորների գործունեության, տեսալսողական արտադրանքին զուգահեռ կամ տեսալսողական արտադրանքի կազմում հաղորդվող կամ տեսալսողական արտադրանքի միջոցով հասանելիություն ստացող լրացուցիչ տեսալսողական կամ տեքստային տեղեկատվության (ինտերակտիվ հեռուստատեսության) վրա:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 23-րդ կետերի համաձայն՝ Օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **տեսալսողական մեդիաձառայություն** մատուցող (այսուհետ՝ Հեռարձակող, լսողական մեդիաձառայություն մատուցող՝ Լսողական ծրագրեր հեռարձակող) Հայաստանի Հանրապետության հիմնադրած կազմակերպություն կամ կարգավորող պետական մարմնի հեղինակագործ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և

խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար:

23) **հեղինակագորում**՝ կարգավորող պետական մարմնի կողմից ֆիզիկական կամ իրավաբանական անձին Հեռարձակողի կարգավիճակ տրվող փաստաթղթի տրամադրում:

Վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության և համադրման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է, որ Հեռարձակողի կողմից վարչական վարույթի շրջանակներում ներկայացված բացատրությունները և պարզաբանումները հիմնավոր և բավարար են իրավախախտման փաստը բացառելու համար, քանի որ Օրենքի իմաստով տեսալսողական մեդիաձառայություն մատուցող է հանդիսանում Հանձնաժողովի կողմից հեղինակագորած ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար, իսկ տվյալ դեպքում Հանձնաժողովի կողմից կազմակերպությանը տրվել է Հեռարձակողի կարգավիճակ (հեղինակագորված է), սակայն Հեռարձակողի կողմից պատրաստված նյութերը տեղադրվում են միայն համացանցում, իսկ Օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Օրենքը չի տարածվում միայն համացանցի միջոցով տեղեկատվության տարածման վրա:

Այսպիսով, Հանձնաժողովը հաշվի առնելով այն փաստը, որ Հեռարձակողն իր կողմից պատրաստված նյութերը տարածում է միայն համացանցով, ուստի վերլուծելով և գնահատելով սույն գործի հետ կապված փաստական հանգամանքներն, ամրագրում է, որ Հեռարձակողի նկատմամբ հարուցված թիվ 19 վարչական վարույթը ենթակա է կարճման:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի բ) կետի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե՝

բ) օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումների կամ դրանց կանխման հետ չկապված հարցով իրավիճակի փոփոխման կամ օրենքով նախատեսված այլ հիմքով վերացել է վարչական ակտի ընդունման անհրաժեշտությունը:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասով, 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 23-րդ կետերով և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի բ) կետը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. Կարճել «ՖԱԿՏՈՐ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ-ի նկատմամբ հարուցված թիվ 19 վարչական վարույթը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՖԱԿՏՈՐ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ-ին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ  
ՀԱԿՈՔՅԱՆ

S.

27 մայիսի 2021թ.

ք. Երևան